Ֆինանսական դրույթներ. Փոխարինող դրույթներ	ԿԱՆՈՆՆԵՐԻ ՊԱՏՃԵՆԻ ԱՄՍԱԹԻՎ. Ուժի մեջ մտնելու ամսաթիվը. Վերջնական հաստատման ամսաթիվը. Փոփոխման ամսաթիվը. Հաջորդ վերանայման ամսաթիվը.	28.07.2015 31.12.2015 01.01.2019
	Սեփականատեր.	Ֆինանսական բաժնի տնօրեն՝ Ջեֆ Սպրագ
	Փաստաթղթի թեման.	Ֆինանսներ
	Տեղեկատու աղբյուրներ.	

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԿԱՆՈՆՆԵՐ (ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅՈՒՆ)

ՆՊԱՏԱԿԸ

Կանոնը նպատակ է հետապնդում տրամադրել հիվանդներին տեղեկատվություն Sutter Health ցանցի բժշկական հաստատություններում հասանելի Ֆինանսական օգնության (բարեգործական բուժօգնություն) և դրա համար իրավասությունը պարզելու մասին:

ԿԱՆՈՆ

Համաձայն Sutter Health-ի քաղաքականության՝ հիվանդանոցները պետք է տրամադրեն հիվանդներին հասկանալի գրավոր տեղեկատվություն Ֆինանսական օգնության վերաբերյալ՝ իրավասու հիվանդներին Ֆինանսական օգնություն (բարեգործական բուժօգնություն) տրամադրելու համար:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Սույն կանոնը վերաբերվում է Sutter Health-ի կամ որևէ դուստր կազմակերպության (Sutter Health-ի ներքին կանոնակարգման փաստաթղթերում այս տերմինի սահմանված իմաստով) կողմից արտոնագրված բոլոր բժշկական հաստատություններին և մնացած բոլոր հիվանդանոցներին, որտեղ Sutter Health-ը և/կամ որևէ դուստր կազմակերպություն ունի քվեարկման անմիջական կամ ոչ անմիջական իրավունք կամ 50%-ից ավել շահութաբաժին ակցիաներական կապիտալում (այսուհետ՝ «Հիվանդանոց» կամ «Sutter Health-ի հիվանդանոցներ» (ինչպես նշված է հավելված Է-ում)): Եթե այլ կերպ սահմանված չէ առանձին փաստաթղթով, այս կանոնը չի վերաբերվում բժիշկներին կամ այլ բուժաշխատակիցների, այդ թվում նաև շտապ օգնության բաժնի բժիշկներին, անէսթեզիոլոգներին, ռենտգենոլոգներին, ստացիոնար բժիշկներին, պաթոլոգներին և այլ բուժաշխատողներին, ում ծառայությունները չեն ներառվում Հիվանդանոցի վճարաթերթիկի մեջ: Սույն կանոնը չի պարտադրում Հիվանդանոցին վճարել վերոնշյալ բժիշկներին կամ այլ բժշկական ծառայություններ մատուցողներին:Համաձայն Կալիֆորնիայի օրենքների՝ հիվանդանոցում աշխատող շտապ օգնության բժիշկը պետք է զեղչեր կատարի ապահովագրություն չունեցող հիվանդներին կամ այն հիվանդներին, ովքեր մեծ բժշկական ծախսեր ունեն և գտնվում են դաշնային օրենքներով սահմանված կենսական մինիմումի 350 կամ ավելի ցածր տոկոսային մակարդակի վրա:

ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ

Բարդ/Մասնագիտացված ծառայություններ.«Բարդ/Մասնագիտացված ծառայությունները» այն ծառայություններն են, որ Sutter Health-ը կամ Հիվանդանոցը համարում են բարդ և մասնագիտացված (օր.՝ փոխպատվաստումները, էքսպերիմենտալ կամ հետազոտական ծառայությունները), ինչպես նաև որոշ ընտրողական հիմունքներով ծառայություններ, որոնք սովորաբար չեն մտնում ապահովագրության մեջ առողջության ապահովագրության համաձայնագրերի շրջանակներում (օր.՝ կոսմետիկ պրոցեդուրաները):

Դաշնային կենսական մինիմում (FPL).«Դաշնային կենսական մինիմումը» («FPL») եկամտի մակարդակի չափման միավոր է, որը ամեն տարի հրապարակվում է Միացյալ Նահանգների առողջապահության և սոցապահովման նախարարության (HHS) կողմից և տրամադրվում հիվանդանոցներին՝ հիվանդների Ֆինանսական օգնության իրավասությունը որոշելու համար:

Ֆինանսական օգնություն.«Ֆինանսական օգնություն» հասկացությունը վերաբերվում է Լրիվ բարեգործական բուժօգնությանը և Բժշկական մեծ ծախսեր պահանջող բարեգործական բուժօգնությանը (ինչպես նշված է Հ. 1-ի Իրավասություն բաժնում):

Հիվանդանոցի ծառայություններ.«Հիվանդանոցի ծառայությունները» այն ծառայություններն են, որոնք Հիվանդանոցը պետք է մատուցի ըստ իր արտոնագրի, այդ թվում նաև շտապ օգնության և այլ բժշկական ծառայություններ (բացի Բարդ/Մասնագիտացված ծառայություններից):

Հիվանդանոցի սպասարկման տարածքների առաջնային լեզուն.«Հիվանդանոցի սպասարկման տարածքների առաջնային լեզուն» դա այն լեզուն է, որով խոսում է մոտ 1,000 մարդ կամ Հիվանդանոցի կողմից սպասարկվող համայնքի 5%-ը՝ ըստ Հիվանդանոցի կողմից գնահատված վերջին Համայնքի առողջապահական կարիքների տվյալների:

Ապահովագրություն չունեցող հիվանդ.«Ապահովագրություն չունեցող հիվանդը» այն հիվանդն է, ով չունի որևէ կողմնակի վճարման աղբյուր բժշկական ծախսերի որևէ մասի համար, ներառյալ (առանց սահմանափակման)՝ առևտրային կամ որևէ այլ ապահովագրությունը, պետության կողմից հովանավորվող առողջապահության համար հատկացված նպաստների ծրագրերը կամ կողմնակի պարտավորությունները, ինչպես նաև այն հիվանդը, ում վճարման բոլոր հնարավոր աղբյուրներից ստացվող եկամուտները սպառվել են նախքան հիվանդանոց ընդունվելը:

Ապահովագրություն ունեցող հիվանդ.«Ապահովագրություն ունեցող հիվանդը» այն հիվանդն է, ով ունի որևէ կողմնակի վճարման աղբյուր բժշկական ծախսերի որևէ մասի համար, բացի այն հիվանդներից, ովքեր ստանում են Medi-Cal-ի ապահովագրություն:

Հիվանդի պարտականությունները.«Հիվանդի պարտականությունների» մեջ մտնում է վճարել այն գումարը, որ Ապահովագրություն ունեցող հիվանդը պարտավոր է վճարել առձեռն՝ ապահովագրական ընկերության կողմից հիվանդի նպաստների չափը սահմանվելուց հետո:

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐ

Ա. ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ

1. Իրավասության չափանիշները.Բաժին Բ-ում և Գ-ում նշված խնդրագրերը դիտարկելիս՝ Հիվանդանոցները պետք է աշխատեն Ֆինանսական օգնության համար սահմանված հետևյալ իրավասության չափանիշներով.

Ֆինանսական օգնության կատեգորիան	Հիվանդի իրավասության չափանիշները	Հասանելի զեղչը
ԼՐԻՎ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅՈՒՆ	Այս կատեգորիայի մեջ կարող են մտնել Ապահովագրություն չունեցող հիվանդները և ում Ընտանիքի ողջ եկամուտը (ստորև սահմանված իմաստով) կազմում է FPL-ի 400%-ը կամ դրանից ցածր	Հիվանդանոցի ծառայությունների համար ներկայացված ծախսերի ամբողջական քաղվածք
ԲԺՇԿԱԿԱՆ ՄԵԾ ԾԱԽՍԵՐ ՊԱՀԱՆՋՈՂ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅՈՒՆ (Ապահովագրություն ունեցող հիվանդների համար)	1. Այս կատեգորիայի մեջ կարող են մտնել Ապահովագրություն ունեցող հիվանդները և ում Ընտանիքի ողջ եկամուտը (ստորև սահմանված իմաստով) կազմում է FPL-ի 400%-ը կամ դրանից ցածր, **<u>և</u>** 2. Իրենց կամ ընտանիքի անդամների բժշկական ծախսերը (որոնք առաջացել են Հիվանդանոցում կամ վճարվել են այլ ծառայություն մատուցողներին վերջին 12 ամսվա ընթացքում) գերազանցում են Ընտանիքի ողջ եկամտի 10%-ը:	Հիվանդանոցի ծառայությունների համար ներկայացված Հիվանդի պարտականությունների շրջանակում վճարվելիք գումարի քաղվածք

2. <u>Ընտանիքի եկամտի հաշվարկումը</u>.Հիվանդի Ֆինանսական օգնության իրավասությունը սահմանելու համար Հիվանդանոցը պետք է նախ հաշվի հիվանդի Ընտանիքի եկամուտը հետևյալ եղանակով.

<u>ա) Հիվանդի ընտանիքը</u>.Հիվանդի ընտանիք հասկացությունը սահմանվում է հետևյալ կերպ.

(i) <u>Չափահաս հիվանդներ</u>.18 տարեկանից մեծ հիվանդների դեպքում Հիվանդի ընտանիք հասկացության մեջ մտնում են հիվանդի ամուսինը, կողակիցը և իրենց խնամակալության տակ գտնվող 21-ից փոքր երեխաները՝ անկախ նրանից իրենց տանն են ապրում, թե ոչ:

(ii) Անչափահաս հիվանդներ.18 տարեկանից փոքր հիվանդների դեպքում Հիվանդի ընտանիք հասկացության մեջ մտնում են հիվանդի ծնողները, խնամակալ ազգականները և այդ ծնողների կամ խնամակալ ազգականների 21-ից փոքր մյուս երեխաները:

բ) Ընտանիքի եկամուտը հաստատող փաստաթուղթ. Որպես եկամուտը հաստատող փաստաթուղթ հիվանդը պետք է միայն ներկայացնի վերջին վճարումների կտրոնը կամ հարկային հաշվետվությունները: Ընտանիքի եկամուտ նշանակում է Հիվանդի ընտանիքի բոլոր անդամների տարեկան եկամուտները վերջին 12 ամսվա ընթացքում կամ նախորդ հարկային տարվա ընթացքում, որոնք ներկայացված են վերջին վճարումների կտրոնների կամ եկամտի հարկային հաշվետվությունների մեջ, ընդհանուր վճարված ալիմենտների և երեխայի համար տրված օգնության մեջ: Այս հաշվարկի մեջ մտնող եկամուտը դա եկամտի ցանկացած տեսակն է, օր.՝ աշխատավարձերն ու ամսականները, թոշակները, պետության կողմից տրվող փոխանցումները, օրինակ՝ սննդի կտրոնների տեսքով, և ներդրումներից ունեցած շահույթը: Տարեկան եկամուտը կարող է սահմանվել՝ հաշվելով Ընտանիքի եկամուտը տարվա սկզբից մինչև ընթացիկ ամսաթիվը: Sutter-ը կարող է ստուգել եկամուտը՝ օգտվելով հնարավոր արտաքին ծառայություններից, որոնք ստուգում են իրավասությունը, եթե իհարկե, այդ ծառայությունը սահմանում է իրավասությունը սույն կանոնի կողմից թույլատրված տեղեկությունների օգնությամբ:

գ) Ընտանիքի եկամտի հաշվարկը միայնակ հիվանդների համար. Այն միայնակ հիվանդները, ում ամուսինը մահացած է, կարող են համարվել եկամուտ չունեցող և նրանց Ընտանիքի եկամուտը չի հաշվարկվի: Միայնակ հիվանդների համար չեն պահանջվում եկամուտը հաստատող փաստաթղթեր, ամեն դեպքում, կարող են պահանջվել գույքի գնահատման փաստաթղթեր: Միայնակ հիվանդը, ում ամուսինը մահացած է, կարող է դիմել Ֆինանսական օգնության համար

3. Ընտանիքի եկամտի հաշվարկը FP-ի տոկոսայնության տեսակետից. Ընտանիքի եկամուտը հաշվելուց հետո Հիվանդանոցը պետք է հաշվի Ընտանիքի եկամտի մակարդակը FPL-ի համեմատությամբ՝ արտահայտված FPL-ի տոկոսներով: Օրինակ՝ եթե երեք հոգուց կազմված ընտանիքի դաշնային կենսական մինիմումը կազմում է $20,000, իսկ հիվանդի Ընտանիքի եկամուտը $60,000 է, Հիվանդանոցը պետք է հաշվի Ընտանիքի եկամուտը որպես FPL-ի 300%:Հիվանդանոցները այս հաշվարկները պետք է կիրառեն խնդրագիրը ներկայացնելու գործընթացի ընթացքում, որպեսզի որոշեն՝ արդյոք հիվանդի եկամուտները համապատասխանում են Ֆինանսական օգնության չափանիշներին:

4. Որոշակի հանգամանքներ - Նպաստները վերջացել են ստացիոնար բուժման ընթացքում.Եթե Ապահովագրություն ունեցող հիվանդի ապահովագրական ընկերությունը վճարում է միայն սպասված փոխհատուցման մի մասը, քանի որ հիվանդը սպառել է իր նպաստները բուժման ընթացքում, Հիվանդանոցը պետք է հիվանդից ստանա սպասված փոխհատուցման տարբերությունը, որը օրենքով պետք է վճարեր ապահովագրական ընկերությունը, եթե հիվանդի նպաստները սպառված չլինեին:Հիվանդանոցը չպետք է հավելավճար վերցնի հիվանդից, այլ այնքան գումար, որքան պետք է վճարեր ապահովագրական ընկերությունը, եթե նպաստները

սպառված չլինեին, ինչպես նաև հիվանդի համավճարը կամ համատեղ ապահովագրությունը: Այն հիվանդը, ում նպաստները սպառվել են հիվանդանոցում բուժման ընթացքում, կարող է դիմել Ֆինանսական օգնության համար:Եթե հիվանդին հասնում է Ֆինանսական օգնություն, Հիվանդանոցը պետք է դուրս գրի բոլոր ծառայությունների համար ներկայացված ծախսերի քաղվածքը, որոնք մատուցվել են նպաստները սպառվելուց հետո:

5. Ֆինանսական օգնության բացառումներ/իրավասության զրկումներ.Ստորև ներկայացված հանգամանքներում Ֆինանսական օգնությունը չի տրվում սույն կանոնի շրջանակներում.

   ա) Եթե ապահովագրություն չունեցող հիվանդը ուզում է ստանալ բարդ/մասնագիտացված ծառայություններ. Սովորաբար, ապահովագրություն չունեցող հիվանդները, ովքեր ուզում են ստանալ բարդ/մասնագիտացված ծառայություններ (օր.՝ փոխպատվաստումները, էքսպերիմենտալ կամ հետազոտական ծառայությունները) և ուզում են ստանալ Ֆինանսական օգնություն նման ծառայությունների համար, պետք է նախ ստանան հիվանդանոցի ֆինանսական գծով պատասխանատուի (կամ իրավասու անձի) կողմից տրված հաստատումը՝ Ֆինանսական օգնության համար իրավասությունը ստանալու համար: Հիվանդանոցները պետք է հնարավորություն տան հիվանդներին նախապես ստանալ ադմինիստրատիվ թույլտվությունը նման ծառայությունների համար: Ընտրողական հիմունքներով մատուցվող ծառայությունների համար, որոնք սովորաբար չեն մտնում ապահովագրական համաձայնագրերի մեջ (օր.՝ կոսմետիկ պրոցեդուրաները) Ֆինանսական օգնություն չի հասնում:

   բ) Medi-Cal-ի հիվանդներ՝ համատեղ ծախսերով.Medi-Cal-ի հիվանդները, ովքեր համատեղ ծախսեր ունեն, չեն կարող դիմել Ֆինանսական օգնության համար՝ իրենց կողմից վճարվելիք համատեղ ծախսերը նվազեցնելու համար:Հիվանդանոցները պետք է միջոցներ փնտրեն՝ այդ գումարները հիվանդներից ստանալու համար:

   գ) Եթե հիվանդը մերժում է ապահովագրված ծառայությունները.Ապահովագրություն ունեցող հիվանդը, ով ուզում է ստանալ ծառայություններ, որոնք չեն ապահովագրվում համաձայնագրով (օրինակ՝ HMO-ի հիվանդը, որն ուզում է Sutter-ից ստանալ ցանցի մեջ չմտնող ծառայություններ կամ, եթե հիվանդը չի ուզում տեղափոխվել Sutter-ի հիվանդանոցից ցանցային այլ հաստատություն), չի կարող ստանալ Ֆինանսական օգնություն

   դ) Ապահովագրություն ունեցող հիվանդը չի համագործակցում երրորդ կողմի վճարողի հետ.Ապահովագրություն ունեցող հիվանդը, ով ապահովագրական վճարներ է ստանում երրորդ կողմի վճարողից, որը հրաժարվում է վճարել ծառայությունների համար, քանի որ հիվանդը չի տրամադրել նրանց անհրաժեշտ տեղեկություններ՝ վերջինիս պարտականությունները սահմանելու համար, չի կարող հավակնել Ֆինանսական օգնության համար:

է) Երրորդ կողմի վճարողը վճարում է անմիջապես հիվանդին.Եթե հիվանդը ստանում է ծառայությունների վճարը անմիջապես փոխհատուցողից, Medicare-ի օժանդակ կազմակերպությունից կամ այլ վճարողից, հիվանդը չի կարող հավակնել Ֆինանսական օգնության համար:

զ) Տվյալների կեղծում. Հիվանդանոցները կարող են չտրամադրել Ֆինանսական օգնություն այն հիվանդներին, ովքեր կեղծում են Ընտանիքի եկամտի, ընտանիքի անդամների քանակի կամ այլ բաների վերաբերյալ տվյալները իրենց խնդրագրի մեջ:

է) Երրորդ կողմի փոխհատուցումներ. Եթե հիվանդը ստանում է ֆինանսական տույժի վճարում կամ դատավճռով սահմանված գումար երրորդ կողմի իրավախախտ անձի կողմից, ով վնասվածք է հասցրել հիվանդին, ապա հիվանդը պետք է օգտագործի այդ տույժի կամ դատավճռի գումարը՝ մնացած ծախսերը հոգալու համար և իրավասու չէ Ֆինանսական օգնության համար:

ը) Մասնագիտացված (բժշկական) ծառայություններ.Անէսթեզիոլոգների, ռենտգենոլոգների, ստացիոնար բժիշկների, պաթոլոգների և այլ բժիշկների ծառայությունները չեն ապահովագրվում այս կանոնի շրջանակներում:Բոլոր բացառությունները նշված են Հավելված Ա-ում:Շատ բժիշկներ աշխատում են բարեգործական բուժօգնության կանոններով, ինչի շնորհիվ հիվանդները կարող են դիմել անվճար կամ զեղչված բուժօգնության համար:Հիվանդները տվյալ բժշկի բարեգործական բուժօգնության մասին կարող են իմանալ անմիջապես բժշկից:

Բ. ԴԻՄԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

1. Յուրաքանչյուր հիվանդանոց պետք է ամեն կերպ իմանա հիվանդից կամ նրա ներկայացուցչից տեղեկություններ այն մասին՝ արդյոք որևէ մասնավոր կամ հասարակական ապահովագրական ընկերություն կարող է ամբողջովին կամ մասամբ վճարել Հիվանդանոցի կողմից մատուցված ծառայությունների համար:Այն հիվանդը, որը ցանկացած պահի նշում է Հիվանդանոցի ծառայությունների դիմաց ներկայացված վճարաթերթիկի հետ կապված իր անվճարունակության մասին, կդիտարկվի Ֆինանսական օգնության համար:Որպես Ապահովագրություն չունեցող հիվանդ համարվելու համար հիվանդը կամ նրա երաշխավորը պետք է հաստատեն, որ նա ապահովագրության կամ պետության կողմից ֆինանսավորվող ծրագրի ոչ մի իրավունքներ չունի, ինչը կկարողանար ամբողջովին կամ մասամբ վճարել հաշիվը: Բոլոր հիվանդներին պետք է խրախուսել ստուգել իրենց հնարավորությունները պետական որևէ ծրագրում գրանցվելու համար, եթե արդեն չեն գրանցվել:

2. Այն հիվանդները, ովքեր ուզում են դիմել Ֆինանսական օգնության համար, պետք է դիմեն Sutter Health-ի ստանդարտ խնդրագրի՝ «Ֆինանսական օգնության խնդրագրի» միջոցով, Հավելված Բ:

3. Ֆինանսական օգնության խնդրագիրը լրացնելու հետ կապված օգնություն հիվանդները կարող են ստանալ՝ այցելելով Sutter Health-ի հիվանդանոցներ, որոնք նշված են Հավելված Ա-ում, զանգահարելով 855-398-1633 հեռախոսահամարով, փոստի միջոցով կամ Sutter Health-ի կայքի միջոցով (www.sutterhealth.org):

4. Ֆինանսական օգնության խնդրագրերը հիվանդները պետք է ուղարկեն հետևյալ հասցեով՝ Sutter Health, P. O. Box 619010, Roseville, CA 95661-9998 Attn: Բարեգործական բուժօգնության խնդրագիր:

5. Ֆինանսական օգնության խնդրագրերը հիվանդները պետք է լրացնեն հնարավորինս շուտ՝ Հիվանդանոցի ծառայությունները ստանալուց հետո:Հիվանդանոցից դուրս գրվելուց հետո հաշիվը ստանալուց հետո 240 օրվա ընթացքում խնդրագիրը չուղարկելու դեպքում Ֆինանսական օգնությունը կարող է մերժվել:

Գ. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

1. Հիվանդանոցը դիտարկելու է Ֆինանսական օգնության համար ներկայացված ամեն մի դիմողի խնդրագիրը և տրամադրելու է օգնությունը, եթե հիվանդը համապատասխանում է բաժին Ա.1-ում նշված իրավասության չափանիշներին և, եթե նա արդեն ստացել է (կամ ստանալու է) Հիվանդանոցի ծառայություն(ներ)ը:

2. Հիվանդները կարող են նաև դիմել պետության կողմից ֆինանսավորվող որևէ ծրագրի օգնությանը, ինչը կարող է երկար դիտարկվել, եթե հիվանդը ընթացիկ ծառայությունների կարիք ունի:

ա) Հիվանդանոցը պետք է օգնի հիվանդներին, որպեսզի նրանք կարողանան պարզել իրենց իրավասությունը պետության կամ այլ մարմինների կողմից ֆինանսավորվող օգնության համար, կամ պարզելու՝ արդյոք հիվանդը կարող է գրանցվել Առողջապահական նպաստ կալիֆորնիական ծրագրում (այսինքն՝ Covered California-ում):

բ) Եթե հիվանդը դիմում է կամ արդեն դիմել է այլ առողջապահական ծրագրի համար նույն ժամանակահատվածում, երբ դիմում է Ֆինանսական օգնության համար, այլ ծրագրի համար ներկայացված խնդրագիրը չի հակասում Ֆինանսական օգնության իրավասությանը:

3. Լրիվ բարեգործական բուժօգնության կամ Բժշկական մեծ ծախսեր պահանջող բարեգործական բուժօգնությանիրավասությունը պարզելուց հետո յուրաքանչյուր դիմողի կուղարկվի «Ծանուցման ձև» (Հավելված Դ)՝ տեղեկացնելով նրանց Հիվանդանոցի որոշման մասին:

4. Հիվանդանոցի կողմից Ծանուցման ձևը ստանալուց հետո հիվանդները կարող են իրավասու լինել Ֆինանսական օգնության համար մինչև մեկ տարի ժամկետով: Մեկ տարի հետո հիվանդները պետք է նորից դիմեն:

5. Եթե Ֆինանսական օգնությունը կրեդիտային հաշիվ է բացում հիվանդի անունով, կրեդիտային հաշվի փոխհատուցման մեջ կլինի գերավճարի տոկոսը՝ հիվանդի կողմից տոկոսային սակագինը (տարեկան 10%) վճարելու օրվանից հաշված՝ համաձայն Առողջապահության և անվտանգության պահպանման օրենսգրքի բաժին 127440-ի, եթե Հիվանդանոցները չպետք է փոխհատուցեն կրեդիտային հաշիվը, որը տոկոսի հետ միասին չի գերազանցում հինգ դոլարը ($5):

Դ. ՎԻՃԱՐԿՈՒՄՆԵՐ

Հիվանդը կարող է դիմել Ֆինանսական օգնությունը մերժելու հետ կապված Հիվանդանոցի կողմից կայացրած որոշումը վերանայելու համար: Դրա համար նա պետք է դիմի հիվանդանոցի ֆինանսական գծով պատասխանատուին կամ իրավասու անձին վիճարկման հիմունքների վրա վիճարկման պատճառ հանդիսացած ծանուցումը ստանալուց երեսուն (30) օրվա ընթացքում: Վիճարկումը պետք է ներկայացվի բանավոր կամ գրավոր: Հիվանդանոցի ֆինանսական գծով պատասխանատուն կամ իրավասու անձը պետք է հնարավորինս շուտ վերանայի հիվանդի վիճարկումը և ուղարկի գրավոր որոշումը հիվանդին:

Ե. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

1. **Լեզուները**.Այս կանոնը հասանելի կլինի բոլորին Հիվանդանոցի սպասարկման տարածքների առաջնային լեզվով:Բացի այդ, համաձայն կիրառելի դաշնային և նահանգային օրենքների և կանոնակարգումների՝ Հիվանդանոցի սպասարկման տարածքների առաջնային լեզվով հասանելի կլինեն նաև այս բաժնում ներկայացված բոլոր ծանուցումները/հաղորդագրությունները:

2. **Հիվանդանոցի ծառայությունների մատուցման ընթացքում հիվանդներին տրամադրվող տեղեկություններ**.

ա) Նախնական ընդունում կամ գրանցում.Նախնական ընդունման կամ գրանցման ընթացքում (կամ անմիջապես ընդունելությունից հետո) Հիվանդանոցները պետք է հիվանդներին տրամադրեն Հավելված Ե-ի մեկ օրինակ, որտեղ ներկայացված է Ֆինանսական օգնության կանոնների պարզ և համառոտ նկարագիրը, ինչպես նաև նրանց ֆինանսական պարտականությունների մեջ մտնող վճարվելիք գումարը հաշվելու համար իրավունքը: Հիվանդանոցները պետք է նշեն բաժանմունքը, որտեղից Հիվանդները կարող են ստանալ Ֆինանսական օգնության վերաբերյալ տեղեկություններ և դրա համար դիմելու օգնություն:

բ) Ֆինանսական օգնության գծով խորհրդատուներ.Ապահովագրություն չունեցող հիվանդներին պետք է նշանակվեն Ֆինանսական խորհրդատուներ, ովքեր պետք է անձամբ այցելեն հիվանդներին հիվանդանոցում: Ֆինանսական խորհրդատուները այդ հիվանդներին պետք է տան Ֆինանսական օգնության խնդրագիրը, ինչպես նաև հիվանդանոցի աշխատակիցների կոնտակտային տվյալները, ովքեր կարող են լրացուցիչ տեղեկություններ տրամադրել Ֆինանսական օգնության վերաբերյալ և օգնել դիմելու գործընթացում:

գ) Արտակարգ իրավիճակների ծառայություններ.Արտակարգ իրավիճակների ծառայությունների դեպքում Հիվանդանոցները պետք է բոլոր հիվանդներին տրամադրեն Ֆինանսական օգնության պարզ և համառոտ նկարագիրը հիվանդի վիճակը կայունանալուց կամ դուրս գրվելուց հետո:

դ) Դուրս գրման ժամանակ տրամադրվող խնդրագրեր.Դուրս գրման ընթացքում Հիվանդանոցները պետք է բոլոր Հիվանդներին տրամադրեն Հավելված Ե-ի մեկ օրինակ, որտեղ ներկայացված է Ֆինանսական օգնության կանոնների պարզ և համառոտ նկարագիրը, իսկ բոլոր Ապահովագրություն չունեցող հիվանդներին՝ Medi-Cal-ի և Երեխաների սպասարկման կալիֆորնիական ծրագրի կամ այլ պետության կողմից ֆինանսավորվող ծրագրի (որը կարող է կիրառելի լինել) խնդրագրերը:

3. **Հիվանդներին տարբեր ժամանակներում տրամադրվող տեղեկություններ**.

ա) Կոնտակտային տվյալներ.Ֆինանսական օգնության մասին լրացուցիչ տեղեկություններ կամ դիմելու գործընթացում օգնություն ստանալու համար հիվանդները կարող են զանգահարել 1-855-398-1633 հեռախոսահամարով կամ դիմել Հավելված Է-ում նշված բաժին:

բ) Վճարային պահանջագրեր.Վճարաթերթիկները պետք է ուղարկվեն հիվանդներին Sutter Health հիվանդանոցի Վճարաթերթիկների ներկայացման ու գումարը ստանալու կանոնին համաձայն: Հիվանդներին ուղարկվող վճարային պահանջագրերին կից պետք է ներկայացվի Հավելված Զ-ը, որտեղ ներկայացված է Ֆինանսական օգնության կանոնների պարզ և համառոտ նկարագիրը, հեռախոսահամար, որով հիվանդները կարող են զանգահարել Ֆինանսական օգնության հետ կապված հարցեր ունենալու դեպքում և կայքի հասցեն, որտեղից հիվանդները կարող են ստանալ լրացուցիչ տեղեկություններ Ֆինանսական օգնության մասին, այդ թվում նաև Ֆինանսական օգնության կանոնի մասին, կանոնի պարզ ու համառոտ նկարագիրը և Ֆինանսական օգնության խնդրագիրը: Ձեր օրինական իրավունքների համառոտ նկարագիրը ներկայացված է Հավելված Զ-ում, ինչպես նաև ներառված է հիվանդի վերջնական հաշվի հայտարարագրի մեջ:

գ) Ըստ պահանջի.Հիվանդանոցները պետք է տրամադրեն հիվանդներին Ֆինանսական օգնության կանոնի օրինակը, Ֆինանսական օգնության խնդրագիրը և Ֆինանսական օգնության կանոնի պարզ ու համառոտ նկարագիրը՝ ըստ հիվանդի պահանջի և անվճար:

4. **Ֆինանսական օգնության մասին տեղեկությունների հրապարակայնությունը**.

ա) Հրապարակում.Հիվանդանոցները պետք է հրապարակեն Ֆինանսական օգնության կանոնի, Ֆինանսական օգնության խնդրագրի և Ֆինանսական օգնության կանոնի պարզ ու համառոտ նկարագրի օրինակները առաջին օգնության սենյակի, ընդունելության սենյակների բանուկ հատվածներում և այլ տեղերում, որտեղ նկատվում է հիվանդների մեծ հոսք, ներառյալ (սակայն չսահմանափակվելով)՝ սպասասրահները, վճարաման բաժինները և հիվանդանոցի ամբուլատոր ծառայությունների հաստատությունները: Հանրային ծանուցումների մեջ պետք է մտնի նաև նրանց ֆինանսական պարտականությունների մեջ մտնող վճարվելիք գումարը հաշվելու համար իրավունքի ծանուցումը:

բ) Կայքը. Ֆինանսական օգնության կանոնը, Ֆինանսական օգնության խնդրագիրը և կանոնի պարզ ու համառոտ նկարագիրը պետք է տեղադրված լինեն Sutter Health-ի վեբկայքի աչքի ընկնող հատվածում (www.sutterhealth.org), ինչպես նաև ամեն մի Հիվանդանոցի կայքում:Ֆինանսական օգնության մասին տեղեկություններ փնտրող մարդիկ պետք է կարողանան մուտք գործել կայք առանց հաշվի և չպետք է տրամադրեն անձնական տեղեկություններ, որպեսզի կարողանան ստանալ տեղեկություններ Ֆինանսական օգնության մասին:

գ) Փոստը.Ֆինանսական օգնության կանոնի, Ֆինանսական օգնության խնդրագրի և կանոնի պարզ ու համառոտ նկարագրի օրինակը Հիվանդները կարող են ստանալ փոստով անվճար:

դ) Հայտարարություններ/Մամլո հաղորդագրություններ. Անհրաժեշտության դեպքում և առնվազն տարին մեկ անգամ Sutter Health-ը առաջնային թերթ(եր)ում հայտարարություն է հրապարակելու Ֆինանսական օգնության հասանելիության մասին այն համայնքներում, որոնք սպասարկվում են Sutter Health-ի կողմից, կամ, եթե այս միջոցը ակտուալ չլինի, Sutter-ը կթողարկի մամլո հաղորդագրություն, որտեղ կներկայացվի այդ տեղեկատվությունը կամ Sutter Health-ը կգտնի այլ միջոցներ կանոնը մասսայականորեն հրապարակելու՝ ի գիտություն մեր համայնքի հիվանդների, ում կարող է վերաբերվել այս կանոնը:

ե) Համայնքի իրազեկությունը.Sutter Health-ը գործընկերային կազմակերպությունների, բժիշկների, համայնքային կլինիկաների և առողջապահական ծառայություններ մատուցող այլ ընկերությունների հետ համատեղ ծանուցելու է համայնքի անդամներին (հատկապես այն կատեգորիային, ովքեր ամենաշատը կարող են Ֆինանսական օգնության կարիք ունենալ) Ֆինանսական օգնության հասանելիության մասին:

Զ. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. **Գրանցամատյաններ**.
   Ֆինանսական օգնության մասին արձանագրությունները պետք է միշտ հասանելի լինեն:Հիվանդանոցները պետք է պահեն Ապահովագրություն չունեցող հիվանդների մասին տեղեկությունները, ովքեր ծառայություններ են ստացել հիվանդանոցում, լրացրած Ֆինանսական օգնության խնդրագրերի քանակի, հաստատված խնդրագրերի, տրամադրված նպաստների արժեքի՝ դոլարով հաշվարկված, մերժված խնդրագրերի քանակի և մերժման պատճառների մասին տեղեկությունները:Բացի այդ, հիվանդի հաշվի մեջ պետք է ավելացվեն նաև նշումներ Ֆինանսական օգնությունը հաստատելու կամ մերժելու մասին:

2. **Վճարաթերթիկների ներկայացում ու գումարը ստանալու մեթոդներ**.
   Հիվանդանոցները պետք է կիրառեն գումարը ստանալու ողջամիտ միջոցներ՝ Հիվանդից վճարումը ստանալու համար:Ֆինանսական օգնության համար դիմում ներկայացնելու ընթացքում Հիվանդից ստացած տեղեկությունները չպետք է օգտագործվեն Հիվանդանոցների կամ Վճարումների հավաքման գործակալությունների կողմից հավաքագրման գործընթացում:Հավաքագրման սովորական եղանակների մեջ մտնում են՝ հիվանդին հայտարարագիր ուղարկելը, հեռախոսազանգերը և հայտարարագրերի ուղեգրերը, որոնք ուղարկվել են հիվանդին կամ երաշխավորին: Գործընկերային կազմակերպություններն ու եկամուտների շրջանառության բաժինները պետք է ունենան վճարաթերթիկների հետ կապված հիվանդի հարցերին և բողոքներին ծանոթանալու, անհրաժեշտության դեպքում՝ ուղղելու ընթացակարգ՝ հիվանդին ժամանակին պատասխանելու համար:

Հիվանդանոցը կամ Վճարումների հավաքման գործակալությունները չպետք է կիրառեն արտասովոր հավաքման մեթոդներ (ինչպես սահմանված է Sutter Health-ի Հիվանդանոցների վճարաթերթիկների ներկայացման և վճարումների հավաքման կանոնով): Հիվանդանոցների վճարաթերթիկների ներկայացման և վճարումների հավաքման կանոնի օրինակները կարող եք անվճար ներբեռնել Sutter Health-ի կայքում՝ sutterhealth.org, զանգահարելով 855-398-1633 հեռախոսահամարով կամ Հիվանդանոցի հիվանդների գրանցման կենտրոնում, Հիվանդների ֆինանսական ծառայությունների գրասենյակներում և շտապ օգնության բաժանմունքում::

3. <u>Կանոնների ներկայացումը OSHPD-ին</u>.
Sutter Health-ի Հիվանդանոցները պետք է ներկայացնեն Ֆինանսական օգնության մասին կանոնները Նահանգային պլանավորման և առողջապահության զարգացման գրասենյակ (OSHPD): Կանոնները կարող են տեղադրվել OSHPD-ի կայքում՝ https://syfphr.oshpd.ca.gov/

4. Սովորաբար ներկայացվող հաշիվներ

Համաձայն Հարկային օրենսգրքի բաժին 1. 501(r)-5-ի՝ Sutter-ը, հաշիվը ներկայացնելիս, ընդունում է Medicare-ի մեթոդը, ինչևիցե, ֆինանսական օգնություն ստացող հիվանդները ներկայացվող հաշիվներից ավել չեն վճարելու, քանի որ իրավասու հիվանդները չեն վճարում ոչինչ:

ՏԵՂԵԿԱՏՈՒ ՆՅՈՒԹԵՐ

Հարկային օրենսգրքի բաժին 501(r)

Դաշնային կանոնակարգումների 26-րդ օրենսգիրք 1.501(r)-1-ից 1.501(r)-7 գլուխ

Կալիֆորնիայի Առողջապահության և անվտանգության պահպանման օրենսգրքի
բաժին 124700-ից 127446

Այս կանոնը հանդիսանում է Sutter Health-ի Վճարաթերթիկների ներկայացման և վճարումների հավաքման մասին կանոնի (Ֆինանսական դրույթներ 14-227) մասը:

ՀԱՎԵԼՈՒՄՆԵՐ

Հավելված Ա - Ծառայություն մատուցողներ, որոնց վրա տարածվում է Կանոնը և մատուցողներ, որոնց վրա չի տարածվում
Հավելված Բ - Ֆինանսական օգնության խնդրագիր
Հավելված Գ - Ֆինանսական օգնության հաշվարկման աղյուսակ
Հավելված Դ - Sutter Health-ի՝ բարեգործական բուժօգնության համար իրավասության որոշման ծանուցման ձև
Հավելված Ե - Կարևոր տեղեկատվություն հիվանդներին վճարաթերթիկների մասին
Հավելված Զ - Իրավունքների ծանուցում
Հավելված Է - Sutter Health-ի գործընկերային հիվանդանոցներ, Ֆինանսական օգնության մասին տեղեկատվական կենտրոնների փոստային հասցեն և կայքի հասցեն

Հավելված Ա

Ծառայություն մատուցողներ, որոնց վրա տարածվում է Կանոնը և մատուցողներ, որոնց վրա չի տարածվում

Հետևյալ կայքում՝ http://www.sutterhealth.org/communitybenefit/financial-assistance.html նշված ծառայություն մատուցողները **ենթակա են** սույն Կանոնին:

Հետևյալ կայքում՝ http://www.sutterhealth.org/communitybenefit/financial-assistance.html նշված ծառայություն մատուցողները **ենթակա ՉԵՆ** սույն Կանոնին

Հավելված Բ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԽՆԴՐԱԳԻՐ

ՀԻՎԱՆԴԻ ԱՆՈՒՆԸ_____ ԱՄՈՒՍԻՆԸ
_____
ՀԱՍՑԵՆ _____ ՀԵՌԱԽՈՍԱՀԱՄԱՐԸ
_____
ՀԱՇՎԻ# _____ SNN _____ _____
(ՀԻՎԱՆԴ) (ԱՄՈՒՍԻՆ)

ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ. Նշեք ամուսնու, կողակցի կամ երեխաների անունները, եթե նրանք 21-ից փոքր են:Եթե հիվանդը անչափահաս է, նշեք ծնողների, խնամակալ ազգականների և 21-ից փոքր հարազատ քույրերի/եղբայրների անունները

Անունը	Տարիքը	Ազգակցական կապը
_____	_____	_____
_____	_____	_____
_____	_____	_____
_____	_____	_____

ԱՇԽԱՏԱՆՔԸ ԵՎ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Գործատուն._____Պաշտոնը._____
Կոնտակտային անձ և հեռախոս. _____
Եթե զբաղվում եք ինքնագործունեությամբ, բիզնեսի տեսակը._____

Ամուսնու գործատուն. _____Պաշտոնը._____
Կոնտակտային անձ և հեռախոս. _____
Եթե զբաղվում եք ինքնագործունեությամբ, բիզնեսի տեսակը. _____

ՆԵՐԿԱՅՈՒՄՍ ՍՏԱՑԱԾ ԱՄՍԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏԸ

		Հիվանդ	Այլ ընտանիք
	Ընդհանուր աշխատավարձը (մինչև պահումները)		
Գումարած.	Գործող բիզնեսից ստացած եկամուտը (եթե զբաղվում եք ինքնագործունեությամբ)	_____	_____
Գումարած.	Այլ եկամուտ.		
	Տոկոսներ և շահութաբաժին	_____	_____
	Անշարժ կամ անձնական գույքից	_____	_____
	Սոցապահովումը	_____	_____
	Այլ (նշեք).	_____	_____
	Ստացած ալիմենտներ կամ աջակցման վճարումներ	_____	_____
Հանած.	Վճարած ալիմենտներ կամ աջակցման վճարումներ	_____	_____
Հավասար է.	Ներկայումս ստացած ամսական եկամուտ	_____	_____
	Ներկայումս ստացած ամսական ընդհանուր եկամուտը (ավելացրեք հիվանդ + ամուսին)	_____	_____
